



## ՆՈՐ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ե. ՇԱՀԱԶԻԶ

### Խ ԳՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԷՍՏՈՆԱՑԻ ԴՈԿՏՈՐ ՊԱՌԻ ԱՐԻՍՏԵՒ ՀԵՏ ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1949 թվին ես ստացա Տարտուի համալսարանի ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր, Ուգրո-Ֆին լեզուների ամբիոնի վարիչ՝ Պառլ Արխանեի հետևյալ նամակը Խաշտուր Աբովյանի մասին.

1.

Տարտու, Յակոբունի, 8-1,  
13 փետրվարի 1949 թ.

ԱՐԳՈՄԵԾԱՐ ԸՆԿԵՐ Ե. ՇԱՀԱԶԻԶ,

Ես կարդացի «Մատենագրովիյան տարեկարության» մեջ, որ Դուք հրատարակել էք «Աբովյանի արխիվը»; Աբովյանը ապրել է մեր քաղաքում և եղել է մեր համալսարանում էստոնացի բանաստեղծների և որդիշ գրողների հետ միասին, ինչպես՝ Fr. R. Fähltmann (=Faelmann), Fr. R. Kreutzwald.

Որովհետեւ այստեղ, էստոնական շրջաններում, հայերեն շեն խոսում, մենք շենք կարող օգտվել Ձեր աշխատանքից, այդ պատճառով էլ ես Ձեզ կիսնդրեի, որ Դուք գրեիք ինձ համառոտաբար, թե կա՞ արդյոք Աբովյանի արխիվում մի որևէց բան էստոնացի գործիչների մասին:

Ֆիլոլոգիական գիտությունների դոկտոր, Ուգրո-Ֆին լեզուների ամբիոնի վարիչ՝

ՊԱՌԻ ԱՐԻՍՏԵ

Պատասխանելով նրա այդ նամակին, ես գրեցի, որ Աբովյանի ինձ հայտնի թղթերի մեջ չկա տեղեկություն էստոնացի գործիչների մասին, և ինդրեցի, որ նա, իբրև համալսարանին մոտ կանգնած մարդ, իմանա, թե արդյոք համալսարանի արխիվում մնաւ թե՞լ է մի որևէց վավերաթուղթ Աբովյանի

մասին, և եթե գտնվի այդպիսին, նեղություն քաշի հաղորդել ինձ, թե ի՞նչ թուղթ է և ինչի՞ մասին:

2.

Տարտու, 2 ապրիլի 1949 թ.

ԱՐԳՈՄԵԾԱՐ ԸՆԿԵՐ Ե. ՇԱՀԱԶԻԶ,

Շնորհակալ եմ Ձեր նամակի համար: Սրա չեմ միասին ուղարկում եմ Ձեզ Տարտուի «Էդասի» թերթը, որի մեջ զետեղված է մի հոդված՝ Տարտուի ԷՍՍՌ Պետական կենտրոնական արխիվում եղած Աբովյանին վերաբերյալ նոր տվյալների մասին:

Եթե այդ տվյալները Ձեզ համար հետաքրքրական կլինեն, գրեցեք Արխիվի վերատեսությունը ընկեր Միլլերին հետևյալ հասցեով՝ ԷՍՍՌ, Տարտու, Պետական կենտրոնական դիվան, փողոց ի Լիիվի, Դ. 1:

Խորին հարցանելով՝

ՊԱՌԻ ԱՐԻՍՏԵ

Պատասխանեցինք՝ «Ինչպես որ Դուք մեր լեզուն չեք հասկանում, նույնպես և մենք Ձերը շենք հասկանում, ուստի և չկարողացանք Ձեր ուղարկած թերթը կարդալ: Եթե Ձեզ համար նեղություն չի լինի, ինձրում եմ գրեք Պետական արխիվում նոր հայտնարկված տվյալների խորագրերը»:

3

Տարտու, Յակոբունի, 8-1,

30 մայիսի 1949 թ.

ԱՐԳՈՄԵԾԱՐ ԸՆԿԵՐ Ե. ՇԱՀԱԶԻԶ,

Ձեր նամակը վաղուց է, որ ստացել եմ, բայց այնքան զանազան աշխատանքներ ու-

նեի, որ չեմ կարողացել դեռ պատասխանել:  
Մեր Կենտրոնական արխիվում հետևյալ  
նյութերը կան.

1. Խաչատուր Արովյանի հատուկ իրեն  
վերաբերյալ գործը, իրեւ մեր համալսարա-  
նի ազատ ունկնդիր, որից երևում է, թե նա  
ի՞նչ և ո՞ր առարկաներն է լսել, ի՞նչպիսի  
առաջադիմությամբ և ի՞նչ միջոցներով:

2. Գործ Պարուտի գիտարշավին վերա-  
բերյալ:

3. Մի քանի նկատումներ համալսարանի  
մատենագրական գրքերում:

Մի լրագրական հոդված, որ ես ուղարկեցի  
Չեզ, խոսում է հենց այդ վավերագրերի մա-  
սին: Արխիվում ինձ ասացին, որ պատրաս-  
տում են հրատարակության համար բոլոր  
այդ վավերագրերը:

Համալսարանի մատենադարանում ես պա-  
տահմամբ գտա Հյուրերի (ոչ ընթեցողների)  
գրքում, որ դիակոնոս Արովյանը եղել է  
այդտեղ 1835. թվի Հոկտեմբերի 5-ին: Այդ  
հոկտեմբերին էլ մուծված են այլ անձերի  
(անոները) ժողով՝ Օրբելի, Լոկոմտ Կու-  
շելեվ թեզրուրանիո: Հավանական է, որ այդ  
երեքն էլ միաժամանակ են եղել:

Խորին հարգանքով՝  
ՊԱՌՈՒ ԱՐԻՍՏԵ

Սանօրույթուն. — Խաշատուր Արովյ-  
յանը հայտնի է եղել Դորպատում «Դիակո-  
նոս» անունով, որ նշանակում է սարկավագ  
ժողով՝ հայերեն Հովսեփի: Հովսեփի Օրբելին  
մեզ լավ ծանոթ Հովսեփի Օրբելու պապն է  
եղել, որ Արովյանի Դորպատում եղած ժա-  
մանակ ուսանող է եղել համալսարանում,  
բայց շավարտած, վերադարձել է Թիֆլիս և  
ձեռնադրվել քահանա ու կարգվել Ներսիսյան  
դպրոցի տեսուչ:

«Լոկոմտ» նշանակում է «կոմմա»: Կոմս Կու-  
շելեվ թեզրուրանիո ուսանուած հայտնի իշխանա-  
կան ազգանուն է,

4.

Տարբու, 14 օգոստոսի 1949 թ.

ՄԵԾԱՐԳՈ ԸՆԿԵՐ Ե. ՇԱՀԱԶԻՔ,

Ուղարկում եմ Չեզ էստոնական «Էդասի»  
թերթի մի համարը, որի մեջ Չեզ գրող Պ.  
Զորչյանը գրել է Արովյանի մասին: Նա,  
այսինքն ընկեր Պ. Զորչյանը, Տարտուումն  
է, ուր ծանոթանում է այն տեղերին ու այն  
ժամանակվա հանգամանքներին, երբ Արով-  
յանը ապրել է Տարտուում:

Խորին հարգանքով՝  
ՊԱՌՈՒ ԱՐԻՍՏԵ

